ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/49

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Սպեցմաշ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 07.07.2021թ.),

քննելով ՀՀ Լոռու մարզի Ջրաշենի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար էքսկավատորի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից 02.07.2021թ. ներկայացված (06.07.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/49 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սպեցմաշ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«*Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.*

ՀՀ Լոռու մարզի Ջրաշենի համայնքապետարանի կարիքների համար էքսկավատորի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Սույն Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Սպեցմաշ» ՍՊԸ-ն և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Անուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն /կցվում է/՝ «Սպեցմաշ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց որպես գնման ընթացակարգի հրավերի պայմանները բավարարող մասնակից:

Եվ նույն արձանագրությամբ նաև որոշվել է հաստատվել պայմանագիր կնքելու որոշման տեքստը:

Այնուհետև 25.06.2021թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ հրապարակվել է «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որում նշվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ յուրաքանչյուր չափաբաժնի համար հայտ է ներկայացրել մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սակայն, մինչ օրս «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սպեցմաշ» ՍՊԸ-ին չի ուղարկվել Ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ,հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Հրավերի՝

7.23-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում հինգ օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

8.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

8.2 Սույն հրավերի 1-ին մասի 7.23 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 7.23 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

8.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

8.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

Ստացվում է մի իրավիճակ, որ 24.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Սպեցմաշ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է որպես գնման ընթացակարգի հրավերի պայմանները բավարարող մասնակից, միևնույն ժամանակ որոշվել է հաստատվել պայմանագիր կնքելու որոշման տեքստը:

Այնուհետև, 25.06.2021թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ հրապարակվել է ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որում նշվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ յուրաքանչյուր չափաբաժնի համար հայտ է ներկայացրել մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սակայն, մինչ օրս «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սպեցմաշ» ՍՊԸ-ին կամայականորեն չի ուղարկվել Ընթացակարգի պայմանագրի նախագիծը և Ընկերությունը ունի մտավաղություն, որ այդ նախագիծը այդպես էլ չի ուղարկվելու Պատվիրատուի կողմից:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունիպատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

- Պարտավորեցնել «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել որոշում «Սպեցմաշ» ՍՊԸ-ին «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կնքվելիք պայմանագրի նախագիծը ուղարկեու վերաբերյալ:
- Պարտավորեցնել «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝«Սպեցմաշ» ՍՊԸ-ին ուղարկել «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կնքվելիք պայմանագրի նախագիծը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>ՀՀ Լոռու մարզի Ջրաշենի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ Լոռու մարզի Ջրաշենի համայնքապետարանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Լոռու մարզի Ջրաշենի համայնքապետարանի կարիքների համար էքսկավատորի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սպեցմաշ» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սպեցմաշ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:
3. Պատվիրատուի կողմից 25.06.2021թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սպեցմաշ» ՍՊԸ-ի 02.07.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝

1.***Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին*** ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ***անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր***:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. ***Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:***

2. Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն ***հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:*** Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն

օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.23-րդ ենթակետի համաձայն՝ անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում հինգ օրացուցային օր է: ***<u>Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:</u>***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.3-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:</u>*** Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Այսպես, ՀՀ Լոռու մարզի Ջրաշենի համայնքապետարանի կարիքների համար էքսկավատորի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սպեցմաշ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սպեցմաշ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Պատվիրատուի կողմից 25.06.2021թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Սպեցմաշ» ՍՊԸ-ն 02.07.2021թ. ներկայացված բողոքով վիճարկում է այն փաստը, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Սպեցմաշ» ՍՊԸ-ին մինչ օրս չի ուղարկվել Ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Այս տեսանկյունից ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունն՝ արձանագրում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Միաժամանակ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հստակ կարգավորվում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Այսինքն՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սպեցմաշ» ՍՊԸ-ն, որը նույն արձանագրության համաձայն ճանաչվել է ընտրված մասնակից, այնուհետև Պատվիրատուի կողմից 25.06.2021թ. տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ Ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր, մինչդեռ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը, քանի որ Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում «Սպեցմաշ» ՍՊԸ-ին չի ներկայացվել պայմանագիր կնքելու առաջարկ:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից 02.07.2021թ. ներկայացված բողոքը բավարարել՝ Պարտավորեցնել «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. ընդունել որոշում «Սպեցմաշ» ՍՊԸ-ին «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կնքվելիք պայմանագրի նախագիծը ուղարկելու վերաբերյալ:
2. «Սպեցմաշ» ՍՊԸ-ին ուղարկել «ԼՄՋՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կնքվելիք պայմանագրի նախագիծը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**